

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

„ԱՐԱՐԱՏ“ ԱՄՍԱԳՐՈՅ

Լժմիածնայ գաւառի զործակալ Բարձրապատիւ Գրիգոր վարդապետից իմանալով որ Շահրիարի գիւղում գտնուել է մի բեւեռագիր արձանագրութիւն, փութացայ զնայի այս օրերս Շահրիարի և օրինակելով արձանագրութիւնն՝ ահա յանձնում եմ խմբագրութեանդ ի տպագրութիւն:

Շահրիարի Բարձրագրի օրինակն՝ գտնուած 1896
հոկտեմբերին, որ է ԺԲ-ըդ Արմաւրայ:



Այս մի տող արձանագրութիւնը շրջանակաձև պատում է մի սեւտն պատուանդան, որի մէջը փորուած է սանդի նման. քարը Արմաւրի կապոյտ լեռ քարերիցն է և գտնուում է Շահրիարցի Մնացական Գէորգեանի բակում. նորա մօտ գտնուել են այլևս եօթն նման քարեր: Արձանագրած քարը պահ եմ տուել Շահրիարի Արժ. Սահակ քահանային:

Շահրիարից վերագառնալով Արմաւիր (Ղուրդուղուլի և Թափայ-գիրի գիւղերն), միւս օրը զնայի Մօլլարայաղիտ գիւղը՝ որ նոյնպէս Արմաւրի մի մասը պէտք է եղած լինի ինչպէս և Ղուզիգիդան, Արմաւու և շրջակայ գիւղերը, և Արժ. Յովհաննէս քահանայ Տէր Թահրեանցի ցուցմամբ փորձեցի փորել տալ «Բաղնիսներ» անուանուած մոխրակոյտի մի կողմն:

որ տեղից 1881 թուին՝ դանուել է 3 հատ բե-
ւեռագիր արձանագրութիւն և $1\frac{1}{2}$ արշին խո-
րութեան վրայ երեւցաւ մի նորօրինակ շի-
ւրակատունն է այսպէս.



նութիւն, մի քանի վառարաններով որ կա-
րելի էր կրակատուն համարել, ըստ որում
ուրիշ շինութեան նման չէ:

Մեարդը Արքեպիսկոպոս.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԽԵԴԻՐՆԵՐ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՅ ՊԱՐՏԲԸ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ.

Սար ժամանակի երբ որ Եւրոպայում
առաջնակարգ խնդիրներից մէկն էր համա-
րուում ժողովրդեան սկզբնական կրթու-
թիւնը, մինչև որ առաջ եկաւ պարտաւորե-
ցուցիչ ուսումը: Եւրոպան ծածկուեցաւ խիտ
և ընդարձակասփիւռ ուսումնարանական ցան-
ցով այնպէս որ եթէ առաջ հազարներով էր
համարուում այն մանուկների թիւը, որոնք
անգրագէտ փողոցներումն թափառում էին, այ-
ժմ զոցա թիւը հազիւ տասնեակների է հաս-
նում: Այս գործում նախաձեռնութիւնը ա-

ւելի կառավարութիւնների կողմից էր լինում
քան համայնքի: Բայց ժամանակը և փորձը
ցոյց տուեց, որ այդքանը բաւական չէ: Բայցի
այն հանգամանքից, որ մանուկներից շատերը
դեռ դարձեալ անգրագէտ մնալով են մեծա-
նում, նոյն իսկ կրթութիւն ստացածներն
ևս այն աստիճան փոքր ծաւալով ուսում են
առնում, որ յետոյ կեանքի մէջ նոր է զգա-
ցուում ստացածի թերին և պակասորդը:

Այս տեղից առաջացաւ լրացուցիչ կրթ-
թութեան խնդիրը, որ այժմ Եւրոպայում ամե-
նակարևոր խնդիրներից մէկն է դարձել: Կիրակ-
նօրեայ ուսում, դիւրամատչելի դասախօսու-
թիւնների ժողովրդական ընթերցանութեան
զրբեր, պարբերական հրատարակութիւնների
ամեն տեսակ նպաստող թանգարանների, գրադա-
րանների, ընթերցարանների, ակումբների՝ արուես-
տավարժ, ծարտարութեանց ուսումնարանների,
ընկերութիւնների, բարեգործական հաստատու-
թիւնների, իսկ նախ և առաջ կոպէկներով ժողո-
ված միլիոններ և այլն—սոքա ամէնքը միեւնոյն
լրացուցիչ ուսման նպաստող զանապան անուն-
ներով օժանդակութիւններ են: Այս բազմազա-
նութիւնը ինքնին ցոյց է տալիս թէ կարի-
քը որքան ընդարձակուել է, որքան բարդ
պահանջներ է առաջ բերում: Եւ յիշուի,
իւրաքանչիւր տեղ, իւրաքանչիւր համայնք,
իւրաքանչիւր ազգաբնակչութիւն իւր յատուկ
հանգամանքներն ունի, որոնք նման չեն միւսնե-
րին, հետեւապէս առանձին խնամք և մատակա-
րութիւն են պահանջում կառավարութիւնը
ամէն տեղ չի կարող հասնել, իւրաքանչիւրի
յատուկ պահանջը չի կարող գուշակել և
լրացնել, առանց ծանրանալու միւսների վե-
րայ, քանի որ ընդհանուրի հարկատուութիւ-
նից պիտի օգտուի և աւելի միակերպ ծրա-
դրով գործ է: Այս տեղից առաջացաւ համայն-
քի ազատ նախաձեռնութիւնը իւր պէտքերը
ըստ պահանջի և առաւելապէս իւր միջոցնե-
րով հոգալու համար: Այս ուղղութիւնը այն
աստիճան որոշուել է, որ մինչդեռ առաջ
կառավարութիւնները զլանում էին լուսաւո-
րութեան փափուկ խնդիրը համայնքի ձեռ-
քում թողնել, այժմ իրանք քաջալերում են
նորան յարատեւիլ այդ ուղղութեամբ, որպէս
զի իրօք յաջողուի մեծ գործը: